Հայտնի են պետական ծառայողներին բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում վերաֆինանսավորում իրականացնող բանկերի տվյալները

ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 1115-Ն որոշմամբ փոփոխություն կատարվեց սույն թվականի օգոստոսի 7-ի թիվ 821-Ն որոշման մեջ, որով կարգավորվում է պետական ոլորտի ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների և ավտոկայանատեղերի վաճառքի պայմանների հետ կապված հարաբերությունները և կարգը:

Համաձայն կառավարության վերոհիշյալ որոշման՝ ծրագրի շրջանակներում կառուցվող շենքերից բնակարանների բաշխման ու վաճառքի աշխատանքները Հայաստանի Հանրապետության անունից կազմակերպում և ղեկավարում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը՝ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ սույն կարգի պայմաններով շահառուներին հիփոթեքային վարկերով ֆինանսավորման պատրաստ «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ վարկատու) սպասարկման գրասենյակների հասցեներն են՝

NN	Անվանում	Հասցե
1	ԱՇԻԲ գլխամաս	Գրիգոր Լուսավորչի 13
2	ԱՇԻԲ Կենտրոն մասնաճյուղ	Պուշկինի 21/1
3	ԱՇԻԲ Արաբկիր մասնաճյուղ	Կոմիտասի պողոտա 41
4	ԱՇԻԲ Կոմիտաս մասնաճյուղ	Կոմիտասի պողոտա 30
5	ԱՇԻԲ Կասկադ մասնաճյուղ	Թամանյան 1 տարածք 70

Ի դեպ. բնակարանների նախագծերին, հատակագծերին, գրանցման կարգին և այլ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար գործում է նոր կայք՝ www.petbnak.am կամ www.petbnakaran.am հասցեով:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 011-62-17-76 կամ 010-56-43-16 հեռախոսահամարով: